ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունվարի 2022 թվականի N 29 - Ա

« ԱՆՊԱՐՏ ՀԱՅ ԶԻՆՎՈՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1 մասի 1-ին և 2-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 12 հավելվածի 5-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Անպարտ հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Անպարտ հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5-րդ հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

21 01.2022

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունվարի 21
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ հունվարի 21-ի
N 29 -Ա որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

1. Կ. Ավանեսյան — ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Ն.Դավթյան — ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
3. Մ.Գանդալյան — ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ս. Ավետիսյան — ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
5. Ա. Սիմոնյան — ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
6. Թ.Կարապետյան — ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
7. Վ. Արզումանյան — «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. հունվարի 21 -ի
N 29 - Ա որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման

Միջոցառումները նվիրված են Հայոց բանակի կազմավորման 30-ամյակին:

Միջոցառման նպատակն է ներկայացնել Հայոց բանակի անպարտելի լինելը, հայրենիքի համար իր կյանքը նվիրաբերող 18-ամյա զինվորի անկոտրում կամքի վառ դրսևորման գաղափարը, որը խթան կհանդիսանա երիտասարդության ազգային ոգու բարձրացման, հայրենասիրական դաստիարակության ամրապնդման, հայրենիքի նկատմամբ հավատի ու վստահության դրսևորման կարևոր գործընթացում:

Միջոցառման ընթացքում կմեծարվի Հայ զինվորը, որպես հայրենիքի պաշտպան և հայրենասիրության վառ օրինակ: Միջոցառման թիրախ-նշանաբանն է ունենալ «Անպարտ բանակ - հզոր հայրենիք» գաղափարախոսությունը:

1. 1.1 - Մոմավառություն Սյունիքի մարզում տեղակայված N զորամասում հատկացված փոքրիկ մատուռում:
   1.2 - Մարզում գործող եկեղեցիների հոգևոր առաջնորդների կողմից ոգեկոչման, օրհնանքի խոսք և աղոթք՝ առ Աստված՝ հերոս նահատակների հոգիների հանգստության և Հայոց աշխարհի խաղաղության համար:
   1.3- Մշակութային միջոցառում ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասում:
2. Հիշատակի և մեծարման ցերեկույթ-միջոցառում «Հայ զինվորը, որպես հայրենիքի պաշտպան և հայրենասիրության վառ օրինակ» թեմայով:
   2.1– ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից մարզում Արցախյան 44-օրյա պատերազմում մարտական հերոսական գործողություններ ցուցաբերած զինծառայողներին, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամություն ստացած անձանց և պատերազմի մասնակից ուսանողների մեծարում, խրախուսում և պարգևատրում:
3. Այցելություն Կապանի Բաղաբուրջ հուշահամալիր, ծաղկադրում և հարգանքի տուրք Արցախյան ազատամարտում և Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների շիրիմներին:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան

հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. հունվարի 21-ի
N 29-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման

Միջոցառման նպատակը.

Միջոցառման նպատակն է՝ ներկայացնել Հայոց բանակի անհաղթելի լինելը, հայրենիքի համար իր կյանքը նվիրաբերող հայ 18-ամյա զինվորի անկոտրում կամքի վառ դրսևորման գաղափարը, մեծարել Արցախյան 44-օրյա պատերազմում մարտական հերոսական գործողություններ ցուցաբերած զինծառայողներին, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամություն ստացած անձանց:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

«Անպարտ հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները

«Անպարտ հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառմանը մասնակցում են ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից կազմված պատվիրակությունը, Արցախյան 44-օրյա պատերազմում մարտական հերոսական գործողություններ ցուցաբերած զինծառայողներ, ուսանողներ, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամություն ստացած զինծառայողներ, արվեստի բնագավառի շնորհալի ստեղծագործողներ, անհատ կատարողներ և մարզում տեղակայված N զորամասի զինվորներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումներն անց են կացվելու 2022թ. հունվար, փետրվար ամիսներին, Սյունիքի մարզի համայնքներում, ուսումնական հաստատություններում և մարզում տեղակայված N զորամասերում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

Միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի կազմի հետ:

Միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. հունվարի 21-ի
N 29 -Ա որոշման

«Անպարտ հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառում

	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	60.0
2	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216	33,0
3	Հանրային սննդի ծառայություններ	4236	27.0
4	Նվերներ	4237	430,0
5	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	180,0
6	Այլ մասնագիտական ծառայություններ	4241	150.0
7	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	4261	20.0
	Ընդամենը		900.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. հունվարի 21-ի
N 29-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

ՀՀ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման վայրը
1	1.1 Մոմավառություն Սյունիքի մարզում տեղակայված N զորամասում հատկացված փոքրիկ մատուռում: 1.2 Ոգեկոչման, օրհնանքի խոսք և աղոթք մարզում գործող եկեղեցիների հոգևոր առաջնորդների կողմից: 1.3 «Անպարտ բանակ-հզոր հայրենիք» խորագրով տոնական համերգ նվիրված հայոց բանակի կազմավորման 30-ամյակին:	27 հունվար	ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամաս
2	Երթ՝ զոհված հերոսների հուշահամալիր, ծաղկադրում և հարգանքի տուրք Արցախյան ազատամարտում և Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների շիրիմներին:	28 հունվար	ք.Կապան Բաղաբուրջի հուշահամալիր
3	Մեծարման ցերեկույթ-միջոցառում, «Հայ զինվորը, որպես հայրենիքի պաշտպան և հայրենասիրության վառ օրինակ» թեմայով: Հանդիպում Արցախյան 44-օրյա պատերազմի հաշմանդամ և ուսանող մասնակիցների հետ:	հունվարի 31-փետրվարի 23	մարզի համայնքներ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան